

Լիլիթ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԺԱՆՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ

«Ժանր» հասկացությունը ծագել է ֆրանսիական կլասիցիզմի զարգացման փուլում (XVII դ. կեսեր), թեև այն չտարբերակված ձևով գոյություն է ունեցել ավելի վաղ:

Ժանրային բաժանումն ի սկզբանե հատուկ է եղել մշակույթին: Մշակույթի, գրականության և ժուռնալիստիկայի զարգացման պատմության ընթացքում ժանրի հասկացությունը մշտապես փոփոխվել է: Մշակույթի ասպարեզում ժանրը գեղարվեստական ստեղծագործությունների հավաքածու է, որն առանձնանում է մի շարք յուրահատկություններով: Այստեղ ժանրերն ընդունված է բաժանել՝ հաշվի առնելով երեք գործոններ՝ ստեղծագործության թեմատիկան, կառուցվածքը, ֆունկցիան: Մշակույթի զարգացման փուլերի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ ժանրային տրոհումը պատմական զարգացման արդյունք է: Գրականության մեջ առանձին ժանրեր են կազմում վեպը, կատակերգությունը, սիրավեպը, գովերգը, մելոդրաման, պամֆլետը, պոեմը, պատմվածքը, ֆելիետոնը, բանաստեղծությունը և այլն: Գրանցից յուրաքանչյուրն ունեն իրենց հատուկ արտահայտչամիջոցներ ու նպատակներ, բայց և անժխտելի ընդհանրություններ: Պոեմն ինքնուրույն ժանր է, բայց ոչ մի գրականագետ չի կարող ժխտել, որ այն պարունակում է բանաստեղծության, վեպի, պատմվածքի և այլ ժանրերի տարրեր: Ժանրերը երբևէ սահմանազատված չեն եղել երկաթյա վարագույրով: Դրանք անընդհատ ներխույսվել են իրար առաջացրել բոլորովին նոր ժանրեր:

XVII դ. ակադեմիական մշակույթի տեսաբանները տարբերակել են «բարձր» և «ցածր» ժանրեր՝ հիմք ընդունելով ստեղծագործության թեման և սյուժեն: «Բարձր» էին համարվում պատմական և առասպելական սյուժեներով կերտված գործերը: Բնությունն ու մարդուն ներկայացնող ստեղծագործությունները դասվում էին «ցածր» ժանրերին: Իռլանդիայում Բոդոքական եկեղեցին XVII դ. դեմ էր «ցածր» ժանրերին՝ բնանկարը, դիմանկարը, նատյուրմորտը համարելով գոեհկություններ: Բայց ժամանակն ասպացուցեց, որ հենց այդ թեմաներն են արվեստագետին բերում հաջողություն և ճանաչում: Նույն կերպ այսպես կոչված «բարձր» ժուռնալիստիկայի՝ մանր թերթերի դարաշրջանում Բենդոլֆ Հեռստն առաջինը խախտեց փոքրամասնության համար տեղեկատվություն տարածելու քարացած նորմը: Նա սիրում էր կրկնել, որ մարդուն հետաքրքրում է հինգ բան. ինքը, ուրիշները, շրջապատող աշխարհը, որտեղից է ինքը, և ինչ է իրեն ասավում:¹ Դրանք իզուր ասված խոսքեր չէին: Հեռստը սկսեց հասարակ մարդկանց հետ խոսել նրանց լեզվով և իր «հավատամքով» անցում կատարեց մանր թերթերից դեպի հանրաճանաչ հրատարակությունների դարաշրջան՝ ձեռք բերելով ընթերցողների հսկայական լսարան:

Հրապարակախոսական ժանրերը ձևավորվել են մշակութային և, առաջին հերթին, գեղարվեստական ժանրերի հիմքի վրա: Գրականագիտության մեջ ժանր հասկացությունը բացատրվում է իբրև «գեղարվեստական բանահյուսության զարգացման գործընթացում ձևավորված ստեղծագործության տիպ»:²

Արդի հայ ժուռնալիստիկան, հետևելով ամերիկյանի զարգացման ուղուն, կարծես թե միտում ունի վերանայելու նախադեմոկրատական ժուռնալիստիկայից ավանդված ժանրային համակարգը: Ներկայիս ամերիկյան ժուռնալիստիկան ընդունում է նյութերի մատուցման երկու եղանակ՝ տեղեկատվություն և վերլուծություն, ընդ որում, կարելիորելով ոչ թե նյութի մատուցման ոճային առանձնահատկությունները, այլ նպատակային խնդիրները: Սակայն, ինչքան էլ վերջինս համոզի, թե ժանրերն այլևս անցյալ են, այնուամենայնիվ, դրանք օբյեկտիվ իրողություն են, քանզի բոլոր ժուռնալիստական նյութերն ունեն յուրահատկություններ, որոնք դրանց միավորում են այս կամ այն ժանրային խմբում և տարբերակում մյուսներից:

Մովորաբար ժուռնալիստական նյութերը ժանրերի են տրոհվում մի շարք առանձնահատկություններով: Տեսաբանների մոտ չկան ժանրային սահմանման խիստ

¹ Журналист, декабрь, 2000, стр. 16.

² Введение в литературоведение (под ред. П. Поспелова), М., 1983, стр. 286.

տարբերակված չափանիշներ: Սա էլ ժուռնալիստիկայում ժանրային բազմազանության պատճառն է: Տարբեր ժուռնալիստական երկերը միավորող սկզբունքները կոչվում են ժանրային սկզբունքներ, իսկ դրանցով միավորվող խմբերը՝ ժանրեր:

Ինչպես ընդունված է ասել, ժանրերից դուրս ժուռնալիստիկա գոյություն չունի:³ Ժամանակակից ժուռնալիստիկայի տեսությունն առանձնացնում է ժանր ձևավորող մի քանի գործոններ, որոնք են՝ հրապարակման օբյեկտը կամ առարկան, հրապարակման նպատակը և հրապարակման ոճը կամ արտահայտչամիջոցները: Հրապարակման առարկա կարող են լինել իրադարձությունները, ամենատարբեր իրադրությունները, գործընթացները, անհատները, նրանց խմբերը և այլն, մի խոսքով, շրջապատող իրականությունը: Ժանրեր ձևավորող կարևոր գործոն է հրապարակման նպատակը: Եթե մի հրապարակման նպատակն է ուղղակի տեղեկացնել հասարակությանը կատարված իրադարձության մասին, ապա մյուսը նպատակ ունի վերլուծել այն, բացահայտել բոլոր հանգուցային պահերը, վերականգնել նրանում առկա տրամաբանական կապերն ու հետևանքները: Երրորդի նպատակն է՝ իրականությունը ներկայացնել գեղեցիկի օրենքներով՝ օգտվելով գեղարվեստական արտահայտչամիջոցներից:

Ժուռնալիստիկայում ընդունված է կիրառել օբյեկտիվ իրականությունն արտացոլող երկու հիմնական մեթոդ՝ ճանաչողական (փորձագիտական) և գեղարվեստական: Փորձագիտական մեթոդներից է հետևելը, որն իրականության ճանաչողությունն է անմիջական զգայական ընկալման միջոցով: Այդ մեթոդի տակ նկատի է առնվում՝ փաստաթղթերի վերլուծությունը, հարցումը, գրույցը, հարցազրույցը, անկետավորումը և տրամաբանական ճանաչողությունը (եզրահանգում, վերլուծություն, համադրում): Գեղարվեստական մեթոդի նպատակն է՝ տալ ոչ թե օբյեկտիվ իրականության ճշգրիտ պատկերը, այլ նրա արտացոլումը հեղինակի մտածողության ու երևակայության մեջ:

Ժանրերի տարբերակման մեջ պակաս կարևոր չեն դրանց ոճական առանձնահատկությունները, որոնցով ձևավորվում են փաստագրական, վերլուծական և գեղարվեստահրապարակախոսական նյութեր: Փաստագրական նյութերի նպատակն է՝ արձանագրել կատարված փաստը, շարադրել իրադարձության մանրամասները: Մրանց բնութագրական է շարադրման պաշտոնական ոճը, նախադասությունների կայուն շարադասությունը, լիմաստ բառերի կիրառությունը: Փաստագրական նյութերում չկան սուբյեկտիվ մտեցում, վերլուծություն ու մեկնաբանություն: Այլ խոսքով՝ դրանք տեղեկատվական խմբի նյութերն են, որոնք մոտավորապես համապատասխանում են այս բանաձևին. «Ես այնտեղ եղել եմ, ես դա տեսել եմ, դա այսպես է տեղի ունեցել»:

Ինչպես ժուռնալիստական ցանկացած ստեղծագործության, այնպես էլ վերլուծական նյութերի հիմքում ընկած են փաստերը, որպես նրանց հիմնարար ատաղձ: Ժուռնալիստիկայում փաստերը սրբազան են, մեկնաբանությունները՝ ազատ: Տեսությունը հայտարարում է՝ փաստերը խոսում են իրենք իրենց: Պրակտիկան հակաճանաչում է՝ փաստերը խոսեցվում են ժուռնալիստի կողմից: Օրինակ, Տիգրան Կարապետյանի այցելությունները գյուղեր ԱԼՄ-ն ներկայացնում է իբրև հումանիստական և իր տեսակի մեջ հերոսական քայլ, մինչդեռ մյուս լրատվամիջոցները լրության են մատնում այդ փաստը, իսկ կուլիաների հետևից հնչում են ծաղրի ու հեզմանքի նոտաներ:

Վերլուծական երկերում առաջին պլան է մղվում հեղինակային ես-ը, նրա սուբյեկտիվ մտածողությունը: Դրանք կառուցվում են հիմնականում ազատ շարադասությամբ, հրապարակախոսական ոճին բնորոշ լեզվական միջոցներով: Վերացարկվելով փաստերից՝ լրագրողը դրանց հիման վրա կատարում է տրամաբանական եզրահանգումներ: Դա համապատասխանում է մոտավորապես այս բանաձևին. «Ես տեղյակ եմ դրանից, իմ կարծիքով, դա այսպես է եղել, ես դրա պատճառներն այսպես եմ տեսնում»:

Գեղարվեստահրապարակախոսական նյութերը տեղեկացնելուց, պրոպագանդելուց, կրթել լուսավորելուց զատ կատարում են մեկ այլ գործառույթ՝ պատճառում են գեղագիտական հաճույք: Մրանք գրվում են գեղարվեստական ոճով, հավասարապես օգտվում են կայուն և շրջուն շարադասության ընձեռած հնարավորություններից, լիմաստ բառերի կողքին գործածում են հուզական արտահայտչամիջոցներ, որոնք

³ *И. К у з н е ц о в, Учебник по информационно-аналитической работе, М., 2001, стр. 67.*

խոսքը դարձնում են զգացմունքային և պատկերավոր: Դրանք իրականության արտացոլումն են գեղեցիկի օրենքներով: Այսպիսի նյութերում առաջին պլան է մղվում նկարագրողական գործառույթը՝ իր հաջողությունը մեծապես պայմանավորելով հեղինակային գրչի վարպետությամբ:

Գեղարվեստահրապարակախոսական և գեղարվեստական նյութերն ունեն մի շարք նմանություններ ու տարբերություններ: Դրանք ընդհանուր են նրանով, որ երկուսին էլ բնորոշ է պատկերավոր ոճը, երկուսն էլ գեղարվեստորեն ներկայացնում են իրականության դրսևորումները: Մակայն, եթե գեղարվեստական ստեղծագործություններում առավելագույն արտահայտչականության հասնելու համար կարող են ընտրվել հորինված հերոսներ և միջադեպեր, ապա գեղարվեստահրապարակախոսական նյութերում դեմքերն ու դեպքերը միշտ իրական են: Դա համապատասխանում է այս բանաձևին. «Ես տեղյակ եմ դրանց, ես դա այսպես եմ տեսել, ինձ դա այսպես է թվացել»:

Վերը նշված գործոնների հիման վրա խմբավորվում են ժանրերի մի շարք տեսակներ, որոնք խորհրդային ժողովրդատիկայում ընդունված էր բաժանել երեք հիմնական խմբի և տասներեք տեսակների. 1. տեղեկատվական (լուր, հարցազրույց, հաշվետվություն, ռեպորտաժ), 2. վերլուծական (թղթակցություն, հոդված, նամակ, բաց նամակ, տեսություն, մամուլի տեսություն), 3. գեղարվեստահրապարակախոսական (ակնարկ, պամֆլետ, ֆելիետոն):

Արդի ժողովրդատիկայի տեսությունն առաջադրում է ժանրերի տարբեր սահմանումներ: Եթե Վ. Սոլգանիկի բնութագրմամբ՝ ժանրը նկարագրման միջոց է, մոտեցման ձև, իրականության հանդեպ վերաբերմունքի արտահայտություն,⁴ ապա Մ. Բախտինի կարծիքով՝ ժանրը գրականության զարգացման գործընթացում նաև ստեղծագործական հիշողության չափանիշ է:⁵ Նկատենք, որ գործնական ժողովրդատիկայում շատ ավելի դիմամիկ է, քան նրա տեսությունը, ուստի վերոնշյալ ժանրային բաժանումը հիմնական է, բայց ոչ վերջնական: Ինչպես նշում է Մ. Շոստակը, տեղեկատվական կոչված հաշվետվության, ռեպորտաժի, թղթակցության և հարցազրույցի ժանրերը հաճախ դուրս են գալիս տեղեկատվականի սահմաններից և դառնում վերլուծական:

Ի դեպ նշենք, որ նախկինում, ի տարբերություն մշակույթի այլ տեսակների, ժողովրդատիկայում անցանկալի են համարվել ժանրային սահմաններից կատարվող շեղումները: Եթե գեղարվեստում ժանրերի փոխներթափանցումները պայմանավորված են պատմական իրողություններով և անխուսափելի են, ապա ժողովրդատիկայում ժանրի «մաքրությունը» որակի չափանիշ է եղել: Հատկապես խորհրդային շրջանի ժողովրդատիկայում ժանրերի սահմանների անորոշությունը բնորոշ է եղել բուլվարային մամուլին և ցածրորակ ռադիո-հեռուստատեսային ծրագրերին: Ժանրային ներհյուսումները, Ն. Կոզլովայի կարծիքով՝ ձևակերպման առումով ժողովրդատիկայում են անճաշակության, քանգի քչերն են օժտված արտահայտման խառը ձևերի ներդաշնակ ներհյուսման տաղանդով:⁶

О ПОНЯТИИ ЖАНРА В ЖУРНАЛИСТИКЕ

___ Резюме ___

___ Л. Киракосян ___

В последнее время все чаще слышатся голоса о необязательности жанровой палитры, так как армянская журналистика развивается по стопам американской, где понятия жанра давно уже размыты. Но анализ журналистских материалов доказывает, что во всех материалах имеются характерные черты, которые формируют тот или иной жанр. К тому же, именно выбор жанра – этой определенной, обладающей устойчивыми признаками формы отражения социальной действительности, помогает плодотворнее работать над материалом, отбором фактов, трактовкой явлений.

⁴ Н. К о х т е е в, В. С о л г а н и и к, *Стилистика газетных жанров*, М., 1978, стр. 9.

⁵ М. Б а х т и н. *Проблемы поэтики Достоевского*, М., 1972, стр. 179.

⁶ Н. К о з л о в а, *Глобализм дореволюционной публицистики*, М., 1999, стр. 1.